ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Արարատի մարզի <<Լուսաշողի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի ռուսաց լեզու, մաթեմատիկա, աշխարհագրություն, բնություն,բնագիտություն, իմ հայրենիք, իմ հայրենիքը և աշխարհը, արվեստ, կերպարվեստ, երաժշտություն, ֆիզկուլտուրա առարկաների ուսուցչի թափուր տեղի համար:

ՈՒսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման :

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է / Ձև 1/,
2. Փաստաթուղթ /դիպլոմ/ ,,Հանրակրթության մասին ,, ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն / Ձև 4/ ,
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հաստատող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները / դրանց առկայության դեպքում/,
6. Մեկ լուսանկար 3x4 չափի ,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են 2025 թվականի օգոստոսի 25-ից մինչև 2025 թվականի սեպտեմբերի 5-ը ներառյալ :

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2025 թվականի սեպտեմբերի 9-ին << Լուսաշողի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում, հասցեն՝ Արարատի մարզ գյուղ Լուսաշող փողոց 19, շենք 1 :

Տեղեկությունների համար զանգահարել՝ (098) 285550 հեռախոսահամարով:

Լուսաշողի միջնակարգ դպրոցի տնօրենի ժ/պ՝ Ա. Ստեփանյան

ՀՎՀՀ 04103809